# ՀՈԳԵՀԱՆԳՍՏՅԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ ՈՒ ԵՐԵՎԱՆԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՈՒՄ՝ ԲԵՍԼԱՆԻ ՋՈՀԵՐԻ ՀՈԳԻՆԵՐԻ ՀԱՆԳՍՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Կիրակի, սեպտեմբերի 5-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցվեց Ս. Պատարագ: Պատարագիչն էր Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ Տ. Արմաշ վարդապետ Նալբանդյանը:

Հավարտ Ս. Պատարագի, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց հոգեհանգստյան մասնավոր արարողություն՝ Հյուսիսային Օսեթիայի Բեսլան քաղաքում ահաբեկչության հետևանքով զոհված հարյուրավոր անմեղ մանկանց ու մեծահասակների հոգիների հանգստության համար:

Կատարված ոճրագործության առիթով Նորին Սրբությունը հանուն Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու ցավակցական գրեր է հղել ՌԴ նախագահ Վլ. Պուտինին, Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսի Բ-ին և Հյուսիսային Օսեթիայի նախագահ Ա. Ձասոխովին:

Սեպտեմբերի 10-ին Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցում, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, ևս տեղի ունեցավ հոգեհանգստյան արարողություն՝ Հյուսիսային Օսեթիայի Բեսլան քաղաքում կատարված ահաբեկչության զոհերի հոգիների հանգստության համար:

Արարողության ավարտին ներկաներին իր Հայրական խոսքն ուղղեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ մեկ անգամ ևս դատապարտելով ահաբեկչության յուրաքանչյուր փորձ, որն ուղղված է արարչագործության պսակ հանդիսացող մարդուն:

*«Աշխարհի հայացքը մի քանի տագնապալի օրեր ուղղված էր դեպի Բեսլան, ուր դպրոցում պատանդ էին բազմաթիվ երեխաներ՝ իրենց ծնողների և ուսուցիչների հետ: Թվում էր մենք բոլորս անհանգստացած ու վրդովված էինք, սակայն երբեք չէինք կարող պատկերացնել իրադարձությունների այդպիսի վախճան: Ահաբեկչությունը ներկայացավ իր զարհուրելի դեմքով: Այն, ինչ տեղի ունեցավ, չունի արդարացում: Այդ անմարդկային ու արբապիղծ բռնարարքին չկա ներում: Ի՞նչ նպատակներ կարող են վկայակոչել անպաշտպան երեխաների ու կանանց վրա ձեռք բարձրացնողները, թիկունքից նրանց վրա կրակահերթ բացողները: Այսպիսի չարաղետ գործերը, արդարև, չեն կարող խուսափել մարդկային և աստվածային դատաստանից:*

*...Այս վշտալի օրերին, երբ տարբեր ազգերի ու կրոնների պատկանող բազմաթիվ մարդիկ և պետական այրեր իրենց ցավակցությունն էին հայտնում զոհվածների ընտանիքներին և Ռուսաստանի ժողովրդին, մխիթարական էր լսել պետությունների ջանքերը միավորելու պատրաստակամության ու կոչերի մասին: Այսօր այս եկեղեցում ներկայությունը Հայաստանի պետական այրերի և Հայաստանում գործող տարբեր պետությունների դեսպանների ու ներկայացուցիչների ևս մեկ վկայություն է, որ բոլորիս միավորում է նույն զիտակցությունը՝ ա-*

*հաբեկչությունը դադարեցնելու ու մերժելու և ամեն միջոց գործադրելու, որպեսզի մարդկության կյանքից դուրս մղվեն ասպվածուրաց նման բռնարարքները: Մարդիկ չեն կարող և չեն ուզում ապրել թշնամության ու անվստահության, շարունակվող տագնապների, վախի ու սարսափի մեջ: Բոլոր ժողովուրդների երազանքը խաղաղությունը, բարօր ու առաջացնաց կյանքն է, իրենց զավակների ապահով, երջանիկ ներկան ու ապագան: Մենք հավատում ենք, որ աշխարհը պիտի միավորվի ահաբեկչության մեծ վտանգի ու սպառնալիքի առջև, որպեսզի ոչ մի ժողովրդի կյանքում տեղ չգտնեն նման աղետներ ու ողբերգություններ»*,- նշեց Նորին Սրբությունն իր խոսքում:

Վեհափառ Հայրապետը համայն հայության անունից վշտակցություն հայտնեց ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինին, Մոսկվայի և Համայն Ռուսաստանի Պատրիարք Ալեքսի Բ-ին, ՀՀ-ում ՌԴ արտակարգ և լիազոր դեսպան Անատոլի Դրյուկովին, ահաբեկչության զոհերի հարազատներին և Ռուսաստանի ողջ ժողովրդին:

Այնուհետև ահաբեկչությունը դատապարտող խոսքերով հանդես եկան ԱԺ նախագահ Արթուր Բաղդասարյանը և Սոս Սարգսյանը:

Արարողությանը մասնակցում էին Մայր Աթոռի միաբանները, ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանը, կառավարության անդամներ, ԱԺ պատգամավորներ, ՀՀ-ում հավատարմագրված դիվանագիտական առաքելությունների ներկայացուցիչներ, մշակույթի և գիտության գործիչներ:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*